ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 28 » ապրիլի 2025թ. № 85-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՅՏԻ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը, Լոռի Բերդ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կազմակերպման և համակարգման նպատակով՝

1. Ստեղծել Լոռի Բերդ համայնքում 2025 թվականին մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին՝
1) կազմել և սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5-օրյա ժամկետում համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցը:
2) հաստատված ժամանակացույցին համապատասխան կազմել և համայնքի ղեկավարին ներկայացնել մասնակցային բյուջետավորման գործընթացի յուրաքանչյուր փուլի ավարտի վերաբերյալ ընթացիկ և տարեկան ամփոփ հաշվետվություններ:
3. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների ներկայացման հայտի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ.

2025թ. ապրիլի 28
գ. Լոռի Բերդ

Հաստատված է
Լոռի Բերդ համայնքի ղեկավարի
«28» ապրիլի 2025թ-ի N 85 որոշմամբ

Կ Ա Զ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

h/h	Հանձնաժողովի անդամի անունը, ազգանունը	Զբաղեցրած պաշտոնը, զբաղմունքը	Հանձնաժողովում կարգավիճակը
1	Էդուարդ Մելիքսեթյան	Համայնքի ղեկավարի տեղակալ	Հանձնաժողովի նախագահ
2	Մարգարիտա Հովսեփյան	Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ	Հանձնաժողովի նախագահի տեղակալ
3	Մարինե Սահինյան	Համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	Հանձնաժողովի քարտուղար
4	Վահրամ Պապիկյան	Ավագանու անդամ	Հանձնաժողովի անդամ
5	Լիլիթ Առաքելյան	Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ	Հանձնաժողովի անդամ
6	Հասմիկ Բարխուդարայն	«Լոռի Բերդի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	Հանձնաժողովի անդամ
7	Գայանե Բալայան	«Արգինա» ՀԿ-ի նախագահ կամ ներկայացուցիչ	Հանձնաժողովի անդամ
8	Արմինե Ասուլյան	Համայնքի ակտիվ բնակիչ	Հանձնաժողովի անդամ
9	Մարիամ Նավասարդյան	Կամավոր	Հանձնաժողովի անդամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հաստատված է
Լոռի Բերդ համայնքի ղեկավարի
« 28 » ապրիլի թիվ 85- որոշմամբ

ՀԱՅՏ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ

1	**Առաջարկի հեղինակի անուն,ազգանուն /անվանում/**	
2	**Կոնտակտային տվյալներ** /հասցե, հեռախոս, էլ.փոստ/	
3	**Առաջարկի անվանումը, նկարագրությունը**	
4	**Հիմնախնդիրը, որի լուծմանն ուղղված է առաջարկը**	
5	**Առաջարկի իրականացման շնորհիվ ակնկալվող արդյունքները**	
6	**Առաջարկի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները**	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հաստատված է
Լոռի Բերդ համայնքի ղեկավարի
«28» ապրիլի 2025 թ-ի N 85 որոշմամբ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 Թ-Ի ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ

N	Մասնակցային բյուջետավորման իրականացման փուլ	Միջոցառում (նկարագրել իրականացվելիք գործողությունները)	Պատասխանատու եվ կատարողներ	Աջակցող թիմակիցներ	ժամկետներ
1	Նախապատրաստական փուլ	1) որոշումների կայացում, 2) չափանիշների, ընթացակարգերի և ձևաթղթերի սահմանում, 3) գործողությունների պլանավորում, 4) նյութերի նախապատրաստում:	**Հանձնաժողովի անդամներ**	**Հասարակական կազմակերպություններ, կրթական հաստատություններ**	**Ապրիլի 21-30**
2	Իրազեկման փուլ	Հանդիպումներ՝ 1)համայնքի բնակչությանը մասնակցային բյուջետավորման գործընթացում իրենց մասնակցության իրավունքի վերաբերյալ իրազեկում, 2) համայնքի բնակչությանը մասնակցային բյուջետավորման գործընթացների, ընթացակարգերի և չափանիշների մասին՝	**Հանձնաժողովի անդամներ**	**Հասարակական կազմակերպություններ, կրթական հաստատությու**	**Մայիսի 2-12**

		գործընթացի բոլոր փուլերում մանրամասն տեղեկատվության տրամադրում 3)համայնքի բնակչությանը ներգրավվում մասնակցային բյուջետավորման գործընթացի մեջ:		**ններ,վարչակա ն ղեկավարներ**	
3	Առաջարկների ներկայացման փուլ	Հայտերի ներկայացում: Հայտերը կարող են ներկայացվել ինչպես էլեկտրոնային/loriberd.am, loriberdhamaynq2017@mail.ru/, այնպես էլ թղթային տարբերակով, համայնքի ղեկավարի կողմից հաստատված ձևաչափով,ներկայացված հայտերի հրապարակում:	**Հանձնաժողովի անդամներ**	**Հասարակակա ն կազմակերպութ յուններ, կրթական հաստատությու ններ, վարչական ղեկավարներ**	**Մայիսի 15-Հունիսի -5**
4	Առաջարկների նախնական գնահատման փուլ	Առաջարկների նախնական գնահատման ժամանակ հանձնաժողովը որոշում է յուրաքանչյուր առաջարկի համապատասխանությունը սահմանված չափանիշներին և լրացնում համայնքի ավագանու կողմից սահմանված՝ առաջարկների չափանիշներին համապատասխանությունը:Հայտերի նախնական գնահատման արդյունքների հրապարակում:Առաջարկների հիմնավորում:	**Հանձնաժողովի անդամներ**	**Հասարակակա ն կազմակերպութ յուններ, աշխատակազմ**	**Հունիսի 6-7**
5	Հանրային քննարկումների և լսումների փուլ	Բնակչությանը, քվեարկության դրվելիք առաջարկների ներկայացում և քննարկում, դրանց օգուտներն ու արդյունքները, ինչպես նաև հանրությանը	**Հանձնաժողովի անդամներ**	**Հասարակակա ն կազմակերպութ յուններ, կրթական**	**Հունիսի 9-24**

		իրազեկում և քվեարկության փուլին նախապատրաստում:		**հաստատություններ, վարչական ղեկավարներ**	
6	Իրականացման փուլ	- Ընտրված առաջարկը(ները) հանձնաժողովը փոխանցում է համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանմանը կամ մասնագետին՝ հետագա մշակման համար: - Համայնքի ղեկավարը ընտրված և մշակված առաջարկը իրականացման մանրամասներով և հիմնավորումներով ներկայացնում է համայնքի ավագանուն:	**Հանձնաժողովի անդամներ**	**Աշխատակազմ**	**Հունիսի 25-մինչև աշխատանքների ավարտ**
7	Հաշվետվության փուլ	Մասնակցային բյուջետավորման գործընթացի մասին հանձաժողովը կազմում և համայնքի ղեկավարին է ներկայացնում հաշվետվություններ և ապահովում դրանց հրապարակումը համայնքի կայքում: Հաշվետվությունները կազմվում են համաձայն ներկայացված ձևաչափերի	**Հանձնաժողովի անդամներ մ**	**Աշխատակազ**	**Յուրաքանչյուր փուլի ավարտից հետո**

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7

Հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» ապրիլի 2025թ. № 86-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրի 06-101-0057-0003 կադաստրային ծածկագրի անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Սվերդլով, 14-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 3/1 հողամաս փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

Կատ՝ Լ. Մամաջանյան
Հեռ. 098289292

2025թ. ապրիլի 28
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
Գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7

Հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» ապրիլի 2025թ. № 87-Ա

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՅԱՂԴԱՆ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 24 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-079-0015-0015 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման 06072GLK6JQ8 ծածկագրով քաղվածքը՝

որոշում եմ.

1. Լոռի Բերդ համայնքի Յաղդան գյուղի 1-ին փողոց, 24 հասցեում գտնվող 06-079-0015-0015 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Լոռի Բերդ համայնք, գյուղ Յաղդան, 1-ին փողոց, թիվ 28 բնակելի տուն;
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

Կատ՝ Լ. Մամաջանյան
Հեռ.՝ 098289292

2025թ. ապրիլի 28
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7

Հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» ապրիլի 2025թ. № 88-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Յաղդան բնակավայրի 06-079-0015-0012 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Յաղդան, 1-ին փողոց, թիվ 22 բնակելի տուն փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

Կատ.՝ Լ. Մամաջանյան
Հեռ.՝ 098289292

2025թ. ապրիլի 28
գ. Լոռի Բերդ